աչքերով, նիհարած, նրանք եւս կազմակերպուել են եւ խմբով, արագօրէն, քաղաքի մէկ մասից միւսն են անցնում:

Շունները ապրում են մեր երեխաների նըման:

* * *

Սուրճը մագլցում է ուղեղիս մէջ ու պատկերների շարանը ճնշում է սիրտս:

Վախում եմ մտածել:

Մարդաբ աղան, փչացած ֆոնոգրաֆի նըման, անդադար պատմութիւններ է պատմում: Վանայ կռիւը, գորգի խանութը, հինգ հարիւր հնչուն ոսկիների կորուստը, «սա մարդոց երեսէն՝ փախուստ, չեկայ»,— ամբողջ իր կենսագրութիւնը:

Աչքս ու միտքս դուրսն են:

Աբովեան փողոցը կամաց կամաց շունչ է առնում, լեցւում է լքուած փեթակի նման ու, վերջալոյսի հետ, կովերը վերադառնում են, եւ մարդիկ դրօսնում:

Ման են գալիս հայերը: Բարձր ծիծաղում են, խումբ խումբ կանգ են առնում, վիճում, պատմում:

Ուրախանում եմ՝ դեռ ինչքա՜ն հայեր կան:

Եկել եմ պատրանքներով լեցուն եւ, սակայն, ամէն ինչ սոսկալիօրէն բնական է: Վերջ ի վերջոյ, այս աշխարհը դրեթէ առաջին անգամն եմ տեսնում եւ ոչ մի բան չի զարմացնում: Պատկերը չափազանցօրէն էական է: Հոգեբանական բազմյարկանի կառուցուածքները այստեղ փլում են, եւ պարզութիւնը ներկայանում է եղան աչքերի նման:

Բուլվարի մօտից երաժշտախմբի ձայներ են լսւում: Մի ինչ որ քայլերգ, տարտամ, ոռնող եւ միամիտ: Կոյրը շարունակում է նուագել իր մելամաղձոտ սրինգը: Շունները հաչում են, կովերը մայում, մինչ մարդիկ խօսում են ցած ձայնով՝ մտաղրաղ, խորհրդաւոր եւ լուրջ:

Ի՛մ հայրենիք:

* * *

Հայաստանը արիւնիս մէջ է մտնում ամենօրեայ քինինի հետ միասին:

Ճահիճներից բարձրացող ջերմը անբնական ոգեւորութիւններ է տալիս:

Գլխարկս բարձրացնում եմ՝ բարե՛ւ ձեզ, եւ ամէն ինչ բարեւում է: Ժպտում են: «Եկել է՞ք՝ լաւ էք արել, լաւ էք արել»... Այդ «լաւ էք արել»ի մէջ քիմիական բարդ բաղադրութիւններ կան: Զգում եմ, որ այդպէս է, սակայն, չտեսնել եմ ձեւացնում:

Կան ուրիշներ էլ, նոր եկած: Մեր մէջ մի տեսակ ենք խօսում, տեղացիների հետ ուրիշ տեսակ: Ամէնքն էլ խաղում են՝ փաստը այդ է: Մէկ մէկի խորհուրդներ են տալիս՝ չլինի՞ որ այսպէս ասես, չլինի որ այնպէս անես: Եղբայր, չե՛ս հասկանում, այստեղ Եւրոպա չի՛ լի՛ լի՛ լի...

Երեւանը ոչ գիւղ է, ոչ քաղաք:

Ժամանակին, խաղաղ, թուլամորթ, սահմանափակ դաւառացիներ ծոյլ կեանք էին ապրում այստեղ: Ցարական դաւառապետը կար, բազմաթիւ չինովնիկներ (պաշտօնեաներ) եւ սպաներ:

Հայերը խանութների մէջ նստած չիթ եւ տեսարակ էին ծախում եւ յօրանջում: Գիշերները տուների մէջ թուղթ էին խաղում: Ամառը քաշւում էին այգիները, խաղող ուտում, խորոված անում եւ դաւուլ, զուռնայով գինի խըմում:

Չինովնիկները ատում էին հայերին՝ դրամի եւ իրենց կանանց պատճառով, եւ ակումբի թղթասեղանների շուրջ ահաւոր մայասիներով տառապում:

Կեանքը սարդի ոստայններ էր հիւսում, երբեմն էլ խոզի նման իր դունչը խոթում էր աղբի մէջ եւ երկարօրէն տրորում:

Երիտասարդները փող էին ժողովում եւ, տարին երկու անգամ, գնում Թիֆլիս պոռնիկներ տեսնելու համար: Եկեղեցիների զանգակները զօղանջում էին առաւօտ եւ իրիկուն: Քահանաները փողոցներից անցնում էին ուռած եւ գոհ, իսկ Առաջնորդարանում մեծ ճաշկերոյթներ էին տեղի ունենում:

Երբեմն մեծ դէպքեր էին պատահում: Կաթողիկոսը գալիս էր քաղաք՝ կեցցէ՛ մեր Հայրապետը, իբր ցոյց ռուս իշխանութեան դէմ, որի առջեւ ամէնը սողում էին: Նոր դաւառապետ էր գալիս: Խանութները փակում էին եւ «բարձր դասակարգը» գնում էր ընդառաջ: Ճառեր էին ասում եւ, մեծ սեղանի շուրջը, դաւառապետը, չինովնիկները եւ հայերը հարբում էին միասին:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան